ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

17.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/23

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ Ա/Ձ Արարատ Փինաչյանի ներկայացուցիչներ՝

Ա. Փինաչյանի (անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման վկայական N 01Ա144675)

Ա. Հովսեփյանի (լիազորագիր, տրված՝ 29.04.2019թ.)

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝

Ա. Համբարձումյանի (լիազորագիր, տրված՝ 26.04.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6543-2019 գրությամբ Ա/Ձ Արարատ Փինաչյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 03.04.2019թ. թիվ 01/61-5742 գրության հիման վրա, 18.04.2019թ. թիվ 26/26-1/6543-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Արարատ Փինաչյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. Ա/Ձ Արարատ Փինաչյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Ա/Ձ Արարատ Փինաչյանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Մասնակիցը Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/1» ծածկագրով հրատապ մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել սույն թվականի մարտի 13-ին՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով (հայտերի բացումը տեղի է ունեցել 14.03.2019թ. ժամը 10:00-ին):

Գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի կողմից ներկայացված հայտում հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն (թիվ 2.1 հավելվածը հաստատված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ), որի հետ կապված պատշաճ Մասնակիցը ծանուցվել է շտկում կատարելու համար: Սակայն քաղաքից դուրս գտնվելու և ինտերնետային կապից զրկված լինելու պատճառով (ապացույցներն առկա են) ծանուցմանը տեղեկացվել է ավելի ուշ, երբ արդեն հնարավություն չի եղել ծանուցման մեջ նշված ժամկետում ճշտելու անհամապատասխանությունը: Չգիտակցելով իրավագիտակցության բացակայության պատճառով հետևանքների մասին Մասնակիցը չի ենթադրել: Առաջին անգամ մասնակցելով էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով կազմակերպվող գնման ընթացակարգին, շատ դժվարությամբ է Մասնակիցը ֆայլերն ուղեցույցի միջոցով ներբեռնել համակարգ, այդ իսկ պատճառով չի հասկացել, ինչպես է բեռնել չստորագրված ֆայլը, որտեղ եղել է Ա/Ձ Արարատ Փինաչյանի նույնականացման քարտի տվյալները՝ որպես իրական և հավաստի տեղեկություն:

Ա/Ձ Արարատ Փինաչյանը տեղեկացրել է, որ զբաղվում է բեմերի և բեմական դեկորների և կոնստրուկցիաների պատրաստմամբ և այդ ոլորտում Մասնակիցն ունի երկար տարիների աշխատանքային փորձառություն (տասը տարուց ավել)՝ էքսպո-2000, Քրիստոնեության 1700-ամյակ, Աիդա օպերա, Սպարտակ բարետ, Շուշիի ազատագրման 15-ամյակ, Ծիծեռնակ մրցանակաբաշխություն, Բանակի օր, Հանրային հեռուստաընկերության 60-ամյակ, Ֆրանկոֆոնիայի Երևանի գագաթաժողով, Էրեբունի-Երևան միջոցառումներ: Նշված միջոցառումների շրջանակներում ծառայություններ են մատուցվել Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնին, Գյումրու Վ. Աճեմյանի անվ. Պետական դրամատիկական թատրոնին, Գ. Սունդուկյանի անվ. Ազգային ակադեմիական թատրոնին, Շարմ ընկերության հետ միասին քաղաքապետարանին, ՀՀ հեռուստաընկերությանը և այլն: Մասնակիցը երբևէ չի խախտել նշված ընկերությունների հետ կնքված պայմանագրերի պայմանները և որևէ կերպ վնաս չի հասցրել պետությանը: Ժամանակին կատարվել են բոլոր պարտավորությունները:

Մասնակիցը խնդրել է վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ա/Ձ Արարատ Փինաչյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/23 ընթացակարգի շրջանակներում 29.04.2019թ. ժամը 12:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.04.2019թ. թիվ 01/61-5742 գրությամբ հայտնել է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/1» ծածկագրով հրատապ մրցույթին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել Ա/Ձ Արարատ Փինաչյանը:

Ընթացակարգի շրջանակներում Ա/Ձ Արարատ Փինաչյանի կողմից ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատասխանություն՝ հայտի թիվ 2.1 հավելվածը հաստատված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի պահանջներով, ծանուցել է Մասնակցին մեկ աշխատանքային օրյա ժամկետում անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 42-րդ կետի պահանջներով, մերժել է Մասնակցի հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/23 ընթացակարգի շրջանակներում 29.04.2019թ. ժամը 12:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/23 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/23 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/1» ծածկագրով հրատապ մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արարատ Փինաչյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Արարատ Փինաչյանի կողմից ներկայացված թիվ 2.1 հավելվածը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը սահմանված կարգով ծանուցել է Ա/Ձ Արարատ Փինաչյանին՝ առաջարկելով մեկ

աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2019թ. ժամը 16:20-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Արարատ Փինաչյանի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6543-2019 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 03.04.2019թ. թիվ 01/61-5742 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե '

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը

գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/1» ծածկագրով հրատապ մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արարատ Փինաչյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Արարատ Փինաչյանի կողմից ներկայացված թիվ 2.1 հավելվածը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը սահմանված կարգով ծանուցել է Ա/Ձ Արարատ Փինաչյանին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2019թ. ժամը 16:20-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Արարատ Փինաչյանի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ***չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Ա/Ձ Արարատ Փինաչյանը «ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/1» ծածկագրով հրատապ մրցույթի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, քանի որ սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել հայտի

թիվ 2.1 հավելվածի շտկված տարբերակը, ուստի գտնում եմ, որ առկա են Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6543-2019 գրությամբ Ա/Ձ Արարատ Փինաչյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Արարատ Փինաչյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ